



Վթար էրզրումի օդանավակայանում



Սողանքներ ծաղկավառում եւ Վանաձորում



Նոյեմբեր ամսվա կլիմայական բնութագիրը



Սավազորի մանգրյան անտառները վրանգված են



արտակարգ թերթ

N 40 (409) 4.11.2011 - 10.11.2011 www.emergency.am www.mes.am

ՍՊԱԾ-ի զարգացումը՝ առաջնայնություն

Նոյեմբերի 2-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանի մոտ տեղի ունեցավ խորհրդակցություն՝ նվիրված սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության զարգացման հիմնախնդիրներին:

Խորհրդակցությանը մասնակցում էին ԱԻ նախարարության եւ ՍՊԱԾ գործակալության ղեկավար կազմի ներկայացուցիչներ:

Սենք բոլորս գիտակցում ենք, որ Հայաստանը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում ու պիտի անենք ամեն հնարավորը՝ այս ոլորտը զարգացնելու համար: Ունենք դիտացանց, կայաններ, դիտահորեր, լաբորատորիա ու լավ գիտական ներուժ: Պիտի փորձենք այս ամենն ի մի բերել, գնահատել

մեր կարիքներն ու միասին շարժվել առաջ, - ասաց Արմեն Երիցյանը:

Խորհրդակցության ընթացքում ՀՀ ԱԻ ՍՊԱԾ պետի տեղակալ Աշխեն Թովմասյանը ներկայացրեց աշխարհի գլոբալ սեյսմիկ վտանգների քարտեզը՝ մասնաամասն անդրադառնալով երկրակեղևի սալերի շարժումներին, պատմական երկրաշարժերին ու առանձնահատկություններին: Տիկին Թովմասյանը պատմեց նաև աշխարհի տարբեր երկրների սեյսմիկ ծառայությունների կողմից կիրառվող վերլուծության մեթոդներն ու Վանի երկրաշարժի վերաբերյալ ստացած տվյալների մասին:

ՍՊԱԾ-ի մասնագետ Սոս Մարգարյանի զեկուցման թեման վերջերս տեղի ունեցած Վանի երկրաշարժի հանգամանակից վերլուծությունն էր ու դրա ազդեցությունը

տարածաշրջանի վրա: Դրա հիմնական աղբյուրը ՀՀ ԱԻ ՍՊԱԾ-ի դիտակայաններից ստացված տվյալներն էին:

ՍՊԱԾ-ի ունեցած հնարավորությունների, կարողությունների, իրականացրած ծրագրերի ու երիտասարդ նոր կադրերի ձեռքբերումների մասին խոսեց ՍՊԱԾ պետ, պրոֆեսոր Սերգեյ Նազարեթյանը:

Քննարկումների ընթացքում ՍՊԱԾ-ի ներկայացուցիչները վերհանեցին այն խնդիրները, որոնք անհրաժեշտ է լուծել երկրաշարժի դեպքում տեղեկատվությունը հնարավորինս արագ սպառողներին հասցնելու համար:

ԱԻ նախարար Արմեն Երիցյանը հանձնարարեց սեղմ ժամկետում կյանքի կոչել արդեն իսկ մշակված արդիականացման ծրագիրը:

Համագործակցությունը շարունակական է լինելու



Հոկտեմբերի 31-ին ՀՀ ԱԻ նախարար Արմեն Երիցյանը ընդունեց ԱՄՆ Երկրաբանական ծառայության (USGS) միջազգային ծրագրերի եվրոպայի, Ռուսաստանի եւ Կենտրոնական Ասիայի բաժնի ղեկավար Ինգրիդ Վերստրատենին եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) հայաստանյան ներկայացուցիչ Ջաֆինգեր Չիմային:

որի զարգացման համար գլոբալ մոտեցում է անհրաժեշտ: Հայաստանը գտնվում է ակտիվ սեյսմիկ գոտում, եւ մեր դիտացանցը պիտի լինի լավագույնը: Երկրաշարժեր այս տարածքում եղել են ու կլինեն, եւ մենք պիտի պատրաստ լինենք դրանց դիմակայել:

Օտարերկրյա հյուրերը եւս հավաստեցին փոխգործակցելու իրենց պատրաստակամությունը՝ կարելու էլ այն համագանքը, որ ՀՀ ԱԻ ՍՊԱԾ գործակալությունը ներգրավված է միջազգային սեյսմոլոգիական ցանցի մեջ եւ մեծ ներուժ ունի:

Հանդիպման ավարտին Ինգրիդ Վերստրատենը եւ Ջաֆինգեր Չիման այցելեցին նաև ԱԻ ՆԳՄԾ-ի համագործակցության ներկայացուցիչներին:

Վանի MW=7.2 երկրաշարժը, փարածաշրջանի սեյսմիկ ռեժիմը եւ ՀՀ փարածքի ընթացիկ սեյսմիկ վրանգի գնահատումը



23 հոկտեմբերի Վանի MW=7.2 երկրաշարժը

2011 թ. հոկտեմբերի 23-ին Գրինվիչի ժամանակով 10:41 (տեղական ժամանակով 15:41) Թուրքիայի արեւելյան մասում, Վան լճից հյուսիս-արեւելք, Վան քաղաքից մոտ 30 կմ հյուսիս տեղի է ունեցել MW=7.2 մագնիտուդով երկրաշարժ, որի աշխարհագրական կոորդինատներն են 38.75N եւ 43.36E: Երկրաշարժի հիպոկենտրոնը գտնվում է 10 կմ խորության վրա:

Եպիկենտրոնին ամենամոտ

գտնվող բնակավայրերն են Օգկայմակը, Օչակլին եւ Գեդիբլակը: Երկրաշարժը զգացվել է Վանում, Բիթլիսում, Մուշում, Բաթմանում, Դիարբեքրում, Երզրում, Սիրնակում, Իրան-Թուրքիա սահմանային գոտու մի շարք բնակավայրերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բազմաթիվ բնակավայրերում, այդ թվում նաև Երեւանում:

Հոկտեմբերի 28-ի դրությամբ երկրաշարժին հաջորդել են M≥3.0 ավելի քան 722 հետցուցում: Հետցուցումային ակտիվությունը դեռ շարունակվում է:

Սեյսմիկ պաշտպանության

ազգային ծառայության տվյալներով Հայաստանի Հանրապետության բազմաթիվ բնակավայրերում, այդ թվում Երեւան քաղաքում, երկրաշարժը զգացվել է 3-5 բալ ուժգնությամբ՝ ըստ MSK-64 սանդղակի:

ՀՀ ԱԻ ՍՊԱԾ-ի կողմից վարվող երկրաշարժերի Ազգային կատալոգը սահմանափակվում է 38.00-42.00N եւ 42.00-48.00E աշխարհագրական կոորդինատներով: Կատալոգի գործիքային ժամանակահատվածը սկսվում է 1962 թվից, երբ տարածաշրջանում արդեն գործում էին բավական թվով սեյսմոլոգիական կայաններ, որոնք թույլ էին տալիս առավել ճշգրիտ որոշելու տեղի ունեցած երկրաշարժերի հիմնական պարամետրերը: Սեյսմիկ ռեժիմը ՍՊԱԾ-ում ուսումնասիրվում է վերը նշված աշխարհագրական կոորդինատներով սահմանափակված տարածքի համար: Ուսումնասիրվող տարածքում 1962-2011 թթ. տեղի է ունեցել MW≥7.0 չորս երկրաշարժ (1976՝ MW=7.1, 1983՝ MW=7.0, 1988՝ MW=7.0, 2011՝ MW=7.2; H=7-33 km), որոնց էպիկենտրոնների բաշխվածությունը բերված է նկար 2-ում:

Հաշվի առնելով 2011 թվի հոկտեմբերի 23-ին MW=7.2 տեղի ունեցած երկրաշարժի ուժգնությունը, կատարվել է վերլուծություն՝ պարզելու համար այս երկրաշարժի հնարավոր ազդեցությունն ուսումնասիրվող տարածքի սեյսմիկ ռեժիմի վրա: Քանի որ այս երկրաշարժի էպիկենտրոնը գտնվում է 1976 թ. նոյեմբերի 24-ին տեղի ունեցած MW=7.1 երկրաշարժի (Չալդրանի երկրաշարժ) էպիկենտրոնին մոտ, ընթացիկ սեյսմիկ ռեժիմն ուսումնասիրելիս ուշադրություն է դարձվել նաև 1970-1983 թթ. ընկած ժամանակահատվածի վրա: 1962 թվից մինչև 2002 թվի Չալդրանի օջախային գոտում անջատված էներգիաների արժեքներից երեւում է, որ Չալդրանի երկրաշարժին հաջորդած հետցուցումների ավարտման տարին կարելի է ընդունել 1978 թվի (2 տարի), քանի որ այդ տարուց սկսած անջատված էներգիայի արժեքները նվազում են եւ հաս-

նում իրենց ֆոնային արժեքներին:

Հիմնվելով կատարված համեմատության վրա, կարելի է եզրակացնել, որ հոկտեմբերի 23-ին տեղի ունեցած երկրաշարժի հետցուցումային ակտիվությունն ամենայն հավանականությամբ չի գերազանցի 2 տարին, ընդ որում՝ տեղի ունեցած հետցուցումները կլինեն միջին եւ փոքր մագնիտուդի սահմաններում: Պարզելու համար տարածաշրջանում հնարավոր սեյսմիկ ռեժիմի փոփոխությունը, որը, հավանաբար, կհարուցվի հոկտեմբերի 23-ի երկրաշարժի կողմից, կատարվել է 1976 թ. Չալդրանի երկրաշարժի նախորդած եւ հաջորդած սեյսմիկության ուսումնասիրություն

արագ արձագանքման ծառայություններ



>>> գտնվող 1924 թ. ծնված Վարդենիկ Ռշունուն:

• Հոկտեմբերի 31-ին, ժամը 14.50-ին ահազանգ է ստացվել, որ Գավառ քաղաքի Ազատության 39 շենքի 2-րդ բնակարանի բնակիչը չի արձագանքում դռան եւ հեռախոսի զանգերին. դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:

Փրկարարները բացել են բնակարանի դուռն ու, մնջասենյակի հատակին հայտնաբերելով անօգնական վիճակում գտնվող

տանտեր՝ 1948 թ. ծնված Պապին Աբրահամյանին, նրան ցուցաբերել են առաջին բուժօգնություն:

Շաբաթվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 26 դեպք, որոնց գերակշիռ մասը տեղի է ունեցել խոտածակ տարածքներում:

Գազի արտահոսք՝ բռնկումով

Նոյեմբերի 2-ին, ժամը 22.14-ին ահազանգ է ստացվել, որ

Երեւանի Աճառյան փողոցի 46 հասցեում՝ «ԳՈՇ-ԳԱԶ» ՍՊԸ-ի բազայում, այրվում են գազի ցիստեռներ:

Դեպքի վայր են մեկնել չորս մարտական հաշվարկ եւ հրդեհաշիջման կազմակերպման բաժնի օպերատիվ խումբը:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 22.25-ին, մարվել՝ 22.32-ին:

«ԿամԱԶ» մակնիշի 171 LU 01 պետհամարանիշի գազատարից պահեստային տարա (ռեզերվուար) լիցքավորման ժամանակ տեղի է ունեցել հեղուկ գազի արտահոսք եւ բռնկում:

Սողանքներ ծաղկավանում եւ Վանաձորում

Հոկտեմբերի 28-ին, ժամը 14.42-ին Շաղկավանի գյուղա-



պետ Ն. Աբաբեկյանը դիմել է Տավուշի փրկարարական վարչու-

թյուն՝ հայտնելով, որ գյուղի կենտրոնական հատվածում ակտիվացել են սողանքային երեւոյթներ, որոնք սպառնում են փակել գյուղամիջյան ճանապարհը:

Դեպքի վայր է մեկնել Տավուշի փրկարարական վարչության օպերատիվ խումբը:

Տեղում կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ քանդվել է ճանապարհի 30 գծամետր երկարությամբ ձախակողմյան կողմակը եւ երթելակելի մասի գրեթե կեսը. ճանապարհը դարձել է միակողմանի երթելակելի:

Ճանապարհի հետագա շահագործումը խիստ վտանգավոր է:

Նոյեմբերի 1-ին, ժամը 12.52-ին Լոռու մարզի Դարպաս գյուղի գյուղապետ Ս. Ավետյանից տեղեկություն է ստացվել, որ Վանաձորի Սարի Թաղ թաղամասից Դարպաս գյուղ տանող ավտոճանապարհի սկզբնամասում ակտիվացել են սողանքային երեւոյթներ:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարար վարչության օպերատիվ խումբը:

Պարզվել է, որ Վանաձորի Սարի Թաղ թաղամասի 2-րդ փողոցի թիվ 4, 6 եւ 8 տների կոյու-

ղաջրերը լցվում են հողի մեջ, որի հետեւանքով առաջացել է 30 մ երկարությամբ, 2 մ լայնությամբ եւ 0,5 մ խորությամբ հողի հոսք: Սողանքային երեւոյթների հետագա ակտիվացումը կարող է վտանգավոր լինել հարակից տների եւ Դարպաս գյուղ տանող ճանապարհի համար:

Վերոնշյալ տների բնակիչներին արգելվել է շահագործել կոյուղագծերը:

Իրավիճակը կարգավորելու համար ստեղծվում է հանձնաժողով:



սեյսմիկ պաշտպանություն

Ս. թ. հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 2-ը ՍՊԱԾ-ի դիտարկման շաբաթնապես շաբաթնապես 3 բալ ուժգնությամբ մեկ ստորգետնյա ցնցում է գրանցել: Երկրաշարժը տեղի է ունեցել հոկտեմբերի 31-ին, իսկ էպիկենտրոնային գոտին գտնվում է Թալին քաղաքից 14 կմ հյուսիս-արեւելք:

Տարածաշրջանում. նույն ուժգնությամբ 2 երկրաշարժ է գրանցվել: Դրանք տեղի են ունեցել նոյեմբերի 1-ին եւ 2-ին Լեռնային Դարաբաղի Քարվաճառ քաղաքից 15 կմ հարավարեւելք: Նշենք, որ անցյալ շաբաթ Թուրքիայի Վան քաղաքի մոտ գրանցված ուժեղ երկրաշարժին հաջորդել է ավելի քան 1042 հետցնցում:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է երեք ուժեղ երկրաշարժ: Հոկտեմբերի 28-ին Պերուի ափամերձ գոտում,

Իկա քաղաքից 51 կմ հարավարեւմուտք, տեղի է ունեցել 6.9 մագնիտուդով երկրաշարժ: Տուժել է առնվազն 83 մարդ, վնասվել կամ քանդվել է 134 շենք, թեթևակի վնասվել են որոշ պատմական շինություններ, սեյսմիկ ալիքները զգացվել են ափամերձ բնակավայրերում, այդ թվում մայրաքաղաք Լիմայում, մարդիկ խուճապի մատնված լքել են բնակարանները: Նոյեմբերի 1-ին 6.3 մագնիտուդով գրանցված երկրաշարժի էպիկենտրոնային գոտին գտնվում է Մեքսիկայի խաղաղօվկիանոսյան ափամերձ հատվածում, Սոկորո կղզուց 227 կմ հյուսիս-արեւելք: Երկրաշարժն զգացվել է մեքսիկական խալիսկո, Նախարիտ եւ Ներքին Կալիֆոռնիա նահանգներում: Հաջորդ օրը խաղաղ օվկիանոսի հարավում տեղի է ունեցել սեյսմիկ իրադարձություն, որն ունեցել է 6.2 մագնիտուդ:

ԱԻՆ ՍՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում նոյեմբերի 4-ին եւ 5-ին առանձին շրջաններում, 6-ին եւ 7-ին՝ առավելապես արեւելյան շրջաններում, 8-ին՝ Սյունիքում եւ Արցախում սպասվում են տեղումներ: Քամին հյուսիս-արեւելյան՝ 2-7 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը նոյեմբերի 4-ի գիշերը կբարձրանա 2-4 աստիճանով, ցերեկը՝ նույնքանով կնվազի: 6-ին եւ 7-ին արեւելյան շրջաններում ջերմաստիճանը կնվազի 12-14, հանրապետության մյուս շրջաններում 2-4, 8-ի գիշերը՝ եւս 3-5 աստիճանով:


Օդի ջերմաստիճանը նոյեմբերի 4-ի գիշերը կտատանվի լեռնային շրջաններում՝ 0... -5, Տավուշում՝ +1... +6, Լոռիում՝ -3... +2, Արագածոտնի նախալեռներում՝ +2... +5, Արարատյան դաշտում՝ +2... +5, Սյունիքի հովիտներում՝ +4... +7,

Սյունիքի նախալեռներում՝ -2... +3, Արցախում՝ +2... +6 աստիճանի սահմաններում:

Օդի ջերմաստիճանը նոյեմբերի 4-ի ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ +2... +7, Տավուշում՝ +9... +14, Լոռիում՝ +7... +12, Արագածոտնի նախալեռներում՝ +9... +12, Արարատյան դաշտում՝ +10... +13, Սյունիքի հովիտներում՝ +10... +15, Սյունիքի նախալեռներում՝ +4... +9, Արցախում՝ +9... +13 աստիճանի սահմաններում:

Երեւանում նոյեմբերի 4-ին եւ 5-ին հնարավոր է անձրեւ, 6-ից 8-ը կդիտվի փոփոխական ամպամածություն, էական տեղումներ չեն սպասվում:

Օդի ջերմաստիճանը նոյեմբերի 4-ին գիշերը կտատանվի +2... +4, ցերեկը՝ +10... +12 աստիճանի սահմաններում:



«Էլիտ գրուպ». կյանքի նոր որակ



Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպ» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ» բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպ» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



արտակարգ իրավիճակների նախարարություն...

ՀՀ ԱԻՆ «Մթնոլորտային երեւոյթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ

Հաշվապահական հաշվեկշիռ առ 01.01.2011 թ.

ԱԿՏԻՎ	ՏՈՂ	ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱՎ ԿԵՐՁԻՆ	ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱՎ ԿԵՐՁԻՆ	ՊԱՍԻՎ	ՏՈՂ	ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱՎ ԿԵՐՁԻՆ	ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱՎ ԿԵՐՁԻՆ
1	2	3	4	1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ				III. Սեփական կապիտալ			
Հիմնական միջոցներ	010	172875.0	208291.0	Կանոնադրական կապիտալի զուտ գումար	240		
Անավարտ ընթացիկ նյութական ակտիվներ	020			Էմիսիոն եկամուտ	250		
Ոչ նյութական ակտիվներ	030	1004.0	607.0	Վերագնահատումից, վերաչափումից տարբերություններ	260		
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	040			Կուտակված շահույթ	270		
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	050			Պահուստային կապիտալ	280		
Հետաձգված հարկային ակտիվներ	060			Սեփական կապիտալի այլ տարրեր	290		
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	173879.0	208898.0	Ընդամենը սեփական կապիտալ	300		
II . Ընթացիկ ակտիվներ				IV . Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Նյութեր	090	4150.0	1441.0	Երկարաժամկետ բանկային վարկեր	310		
Աճեցվող եւ բուծվող կենդանիներ	100			Հետաձգված հարկային պարտավորություններ	320		
Արագամաշ առարկաներ	110	3396.0	3387.0	Ակտիվներին վերաբերող շնորհներ	330		
Անավարտ արտադրություն	120			Ոչ ընթացիկ պահուստներ	340		
Արտադրանք	130			Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	350	192137.0	230482.0
Ապրանքներ	140			Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	192137.0	230482.0
Տրված ընթացիկ կանխավճարներ	150			V . Ընթացիկ պարտավորություններ			
Ղեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160	39.0	274.0	Կարճաժամկետ բանկային վարկեր	370		
Կարճաժամկետ ղեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	271.0	27.0	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	410	235.0	78.0
Այլ ղեբիտորական պարտքեր	180			Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	430		
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	190			Այլ կրեդիտորական պարտքեր	450		

Երկրաշարժի մագնիսությունը եւ ուժգնություն

8 բալ
Հատուկ նախագծով կառուցված շենքերում վնասվածքները թեթևակի են, տիպայինում՝ նշանակալի, վատ կառուցվածքներում տեղի են ունենում ավերածություններ: Թեքվում եւ ընկնում են վառարանային եւ գործարանային ծխնեղյուզները, սյուները եւ հուշարձանները: Հորատանցքերում եւ ջրհորներում փոխվում է ջրի մակարդակը: Երկրի մակերեսային վրա երբեմն առաջանում են ճեղքեր:

9 բալ
Հատուկ նախագծով կառուցված շենքերում վնասվածքները լուրջ են, մյուսներում նկատվում են զանգվածային փլուզումներ: Երկրի մակերեսային առաջանում են բազմաթիվ ճեղքեր:

10 բալ
Երկրի մակերեսային առաջացած ճեղքերի լայնությունը հասնում է մինչեւ 1 մետրի: Ավերվում է նույնիսկ լավ կառուցված փայտե եւ քարե տների մեծամասնությունը: Ծռվում են երկաթգծի ռելսերը: Գետերի ափերի եւ սարալանջերի հողը սկսում է սահել:

11 բալ
Կանգուն են մնում միայն շատ քիչ երկաթբետոնե կառույցներ, փլվում են կամուրջները: Երկրի մակերեսային առաջանում են

բազմաթիվ ճեղքեր: Փլուզումները համատարած են:

12 բալ
Հիմնահատակ կործանում: Երկրի մակերեսային առաջանում են լայն եւ երկար ճեղքեր: Գետերը փոխում են հուները: Փլուզվում են լեռները, լանջերի վրա առաջանում են բազմաթիվ սողանքներ, երբեմն առաջանում են արհեստական լճեր:

Այսպիսով, յուրաքանչյուր երկրաշարժի հզորության համար գոյություն ունի ընդամենը մեկ մագնիսություն, սակայն այդ նույն մագնիսության երկրաշարժը կարող է երկրի մակերեսային վրա առաջ բերել տարբեր ուժգնության ցնցումներ, ամենաուժեղից (էպիկենտրոնի տարածքում) մինչեւ ամենաթույլը: Էպիկենտրոնից մեծ հեռավորության վրա: Հետեւաբար երկրաշարժի ուժգնությունը երկրի մակերեսային տվյալ շրջանում հիմնականում կախված է մագնիսության, այսինքն՝ անջատված էներգիայի մեծությունից, օջախի խորությունից եւ էպիկենտրոնից նրա ունեցած հեռավորությունից: Օրինակ, Սպիտակի երկրաշարժը, որի մագնիսությունը եղել է մոտավորապես 7, իսկ օջախը գտնվել է մոտ 9-10 կմ խորության վրա, էպիկենտրոնում առաջ է բերել 9-10 բալ ուժգնությամբ ցնցումներ:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվեկշիռն 2010 թ.

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան աճողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան աճողական)
1	2	3	4
Արտադրանք, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	143586.0	178220.0
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	(143586.0)	(178220.0)
Համախառն շահույթ (վնաս)	030		
Իրացման ծախսեր	040		
Վարչական ծախսեր	050		
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060		
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	070		
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	080		
Գործառնական շահույթ (վնաս)	090		
Ֆինանսական ծախսեր	100		
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	110		
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	130		
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140		
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	150		
Չուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160		
Շահութահարկի գծով ծախս	170		
Չուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)	190		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)	200		

Ղեկավար՝ Ռ. Հովսեփյան

Գլխավոր հաշվապահ՝ Զ. Կոթոյան



Ջրի բերած, ջրի տարած

Շատ մարդիկ դժվարանում են կողմնորոշվել, թե որտեղ կարելի է պահել դառը քրտինքով աշխատած փողն ու տարիների ընթացքում կուտակած խնայողությունները: Հաճախ մարդիկ հնարավոր գողերից ու վատնողներից փողը թաքցնում են ամենամոտեմտեղի տեղերում, սակայն երբեմն կարող է պատահել այնպես, որ գումարը որեւէ «ապահով» տեղ պահելու հետեւանքով միանգամից զրկվեք դրանից: Ահա, թե ինչպես է դա հնարավոր...


Մի անգամ մի գերմանացի մեկնում է Հոլանդիա՝ այնտեղից ավտոմեքենա գնելու: Դրա համար նախատեսված գումարից տղամարդը զրկվում է հենց ուղեւորության սկզբում: Այցելելով գնացքի մեջ գտնվող սանհանգույց՝ նա պատահաբար զուգարանակոնքի մեջ է զգում ո՛չ ավել, ո՛չ պակաս տասնմեկ հազար եվրո: Թղթադրամները սրընթաց սևացող գնացքի միջից

թափվում են երկաթգծերի վրա ու տարածվում շուրջբոլորը: Մեր չկայացած վարորդն անմիջապես շտապում է մեքենավարի մոտ ու խնդրում կանգնեցնել գնացքը: Երկարատեւ որոնումներից հետո նրան հաջողվում է հետ բերել միայն չորս հազար եվրո գումար:

Պակիստանի մի բնակիչ առանց տնից դուրս գալու

կորցնում է երեսուներեք հազար ռուբլի (մոտավորապես 500 ամերիկյան դոլար): Նա իր խնայողությունները պահում էր գրասենյակի դարակներից մեկում: Օրերից մի օր բացելով դարակը՝ նա այնտեղ գտնում է միայն թղթադրամի կտորտանքը: Առնետները դրանք կրծել-մանրել էին: Պակիստանցիները վերջ է մինչեւ կյանքի վերջ վրեժ լուծել փոքրիկ վնասակարներից:

Ավստրիայի հարավ-արեւմուտքում գտնվող փոքրիկ Վիլաչ քաղաքում կրծողները մի խանութ են թալանել: Կողոպուտը նկարահանել էին խանութում տեղադրված տեսախցիկներից: Դրանք խանութի տերը տեղադրել էր նրանից հետո, երբ դրամարկից 50 եվրո գումար էր կորել: Չայնագրված տեսաերկղները



րը նայելիս պարզվում է, որ գազանիկները եվրոներն օգտագործել էին բների ջերմամեկուսացման համար:

Մի զվարճալի դեպք է տեղի ունեցել Բելառուսի խանութներից մեկում: Միջին տարիքի, պատկառելի արտաքինով մի տղամարդ կանգնած էր խանութի դրամարկղի մոտ շարված հերթի մեջ, որպեսզի վճարի վերցրած գարեջրի համար: Երբ հերթը հասնում է նրան, եւ տղամարդը փողը հանում է գրպանից, պարզվում է, որ տաբատը լվանալիս թղթադրամները մնացել են գրպանում ու այնքան լավ լվացվել, որ դրանց արծեքը հնարավոր չէ գուշակել:

նումներից հետո դիմում ուսուկանություն հայտնելով, որ իրեն կողոպուտել են: Իրավապահ մարմինների աշխատակիցները հետաքննություն են սկսում, կազմում կասկածյալների ցուցակ, մեկ էլ հանկարծ... տանտիրուհին հայտնում է, որ գումարը հայտնաբերվել է իր մեքենայի պահարանի դարակում: Նա ուղղակի մոռացել էր, թե որտեղ է պահել փողը:

Պեկինում ապրող մի տատիկ իր բոլոր խնայողությունները... տապակում է նախաճաշի համար: Նա գումարը պահել էր միկրոալիթային վառարանի մեջ ու մոռանալով միացնում է այն, որպեսզի նախաճաշ պատրաստի: Վառարանն իր ուղղակի նշանակությամբ օգտագործելու հետեւանքով այնտեղ պահված 20 հազար յուանը (մոտ 2400 դոլար) այրվում է ու վերածվում մոխրակույտի: Միկրոալիթներից հաջողվում է փրկել միայն 600 դոլար:

Գերմանիայում ապրող մի տատիկ չէր էլ պատկերացնում, որ վիճակախաղի տոմսի հետ աղբարկոն է մտել 13,7 միլիոն



Օրերից մի օր Նորվեգիայում ապրող մի կին օգտագործված ավտոմեքենա է գնում: Նա այդ մեքենայից հանգիստ օգտվում է եւս ութ տարի՝ բոլորովին չկասկածելով իրեն սպասող անակնկալի մասին: Մի օր էլ ավտոմեքենայի բեռնախցիկում նա մի դրամապանակ է գտնում, որի մեջ կլորիկ գումար կար: Պարզվում է, որ այն պատկանում է մեքենայի նախկին տիրոջը, որը տարիներ առաջ կորցրել էր այն: Դրամապանակը ինչ-որ զարմանալի ձևով կպել էր բեռնախցիկի հետին դարակի վերին պատին: Ավտոմեքենայի տիրուհին դրամապանակը գումարով հանդերձ, վերադարձնում է նախկին տիրոջը:

Մի կին որոշում է խնայողությունները պահել ոչ թե բանկում, այլ տանը: Երկար մտածելուց հետո նա գումարը թաքցնում է, իսկ երբ առավոտյան որոշում է ստուգել գաղտնարանը, պարզվում է, որ փողերն անհետացել են: Նա տակնուվրա է անում ողջ տունը եւ երկար որո-



Օղեսայում մասամբ փլուզված տան ավերակներում մի գաղտնարան են գտնում, որի մեջ կային 1917 թ. մուլիկի թղթադրամների կապոցներ: Զանդի որ թղթադրամները կպել էին իրար՝ գումարի իրական չափը հնարավոր չի լինում պարզել: Լավ պահպանված կարթովանցները շինարարության վրա աշխատող բանվորները թռցնում-պահում են որպես հիշատակ:

Ռուս երգիչ ... Բասկով	Հայ ֆիդայի ... Դուան	Արծաթափայլ մետաղ	Ճարտնական ավտոմոբիլ	Հայկական դիցուհի	Երկնային մարմին	Մեծ ու փոփոկ բազմոց	Բարձր տեղից ցած գլորվել	Պատմի բացառիկ տեսակ	Ինքնագործ զինվոր	Հայ առաջին տպագրիչը	Սիջատ	Պտղաբեր, արգաստվոր
↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓
Նահանգ ԱՄՆ-ում		Թռչնի «ծագ»	«Նվազախնայի տղաների» կրտսերը	...	սոցիալիզմ	Թութակի տեսակ	Հայ դերասան Խորեն ...
↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓
Անդրերկրյա աշխարհի հունական դից.	Խորհրդային դերասան Եֆիմ	Հայ դերասան Գևորգյան ...	Հայ գրող լուսավորիչ	...
↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓
...	Գլխի փաթեթի իբրեւ գարդ	Հայ երգիչ Խորեն ...	Հայ կինոբեմադրիչ Հենրիկ ...	Հայ երգիչ Ծարա
↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓
...	Նավագնացության կողմնորոշիչ	...	Հայկական դիմելածել	Եռանդ, ոգեկորություն
↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓
...